ԵՐԵՎԱՆ

Երևանը համայնք է՝ Երևանի բնակչության հանրություն:
Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է:
Երևանը իրավաբանական անձ է, ունի սեփականության իրավունք և գույքային այլ իրավունքներ:

Երևանն ունի բյուջե, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր անվանմամբ կնիք:

Տարածք Երևանի տարածքը կազմում է 223 քառ.կմ, բնակչությունը՝ 1075.1 հազ. մարդ:

Տեղակայում Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիսարևելյան մասում, Հրազդան գետի երկու ափերին՝ ծովի մակերևույթից 900-1200 մետր բարձրության վրա:

Վարչական բաժանում Երևանը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն:

Երևանի զինանշան

Ընդունվել է Երևանի քաղաքային խորհրդի 1995թ. ապրիլի 26-ի "Երևանի զինանշանի մասին" հ. 1/8-2 որոշմամբ: Հեղինակ՝ Ալբերտ Սոխիկյան:

Երևանի դրոշ

Հաստատվել է որպես Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքի խորհրդանիշ 2004թ. սեպտեմբերի 27-ին, հեղինակներ՝ Կարապետ Աբրահամյան և Կարապետ Փաշյան:

Երևանի օրհներգ

"Էրեբունի - Երևան". խոսքը՝ Պարույր Սևակի, երաժշտությունը՝ էդգար հովհաննիսյանի

Պաշտոնական կայք՝ www.yerevan.am

Ժամային գոտի ՝ UTC+4

Փոստային ինդեքսներ՝ 0001-0099

Հեռախոսային կոդ՝ +374 (10), +374 (60) +374 (11)

101, 911, 112, 108 - ԱԻՆ ճգնաժամային կառավարման կենտրոն / 102 - Ոստիկանություն / 103 - Շտապ բուժօգնության ծառայություն / 104 -Գազի վթարային ծառայություն